

5.5. Պահպանվող տարածքների գործունեության մասին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տվյալների, 1999թ. հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում ընդգրկված են 1 ազգային պարկ («Սևան»), 5 պետական արգելոցներ (Դիլիջանի, Խոսրովի, Շիկահողի, Էրեբունու և Սև լճի) և 22 պետական արգելավայրեր: Բնության հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 311 հազ. հա (ներառյալ Սևանա լճի հայելու մակերեսը) կամ հանրապետության ընդհանուր տարածքի 10.8%-ը: Այստեղ պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60%-ը: Հատուկ պահպանվող տարածքները, բացառությամբ «Սևան» ազգային պարկի, հիմնականում անտառային լանդշաֆտներ են:

«Սևան» ազգային պարկ: Ստեղծվել է 1978թ., ընդգրկում է Սևանա լճի հայելին և լճի մակարդակի իջեցման պատճառով ազատված հատակային գրունտները: Ձբաղեցնում է 150.1 հազ. հա մակերես, որից 24.8 հազ. հա-ն ցամաքային է (բնութագրական այս և հետագա նմանատիպ տվյալները վերցված են «Հայաստանի կենսաբազմազանությունը», առաջին ազգային զեկույց, Երևան, 1999թ., էջ 72-75): Պարկը բաժանված է 3 ֆունկցիոնալ գոտիների՝ արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում առանձնացված են 4 արգելոցներ՝ 3700 հա ընդհանուր մակերեսով, 10 արգելավայրեր՝ գետերի գետաբերաններից սկսած 500 մ երկարությամբ, ինչպես նաև 7200 հա ռեկրեացիոն զոնայի տարածքը, որից 3000 հա-ն ցամաքային է: Ազգային պարկի տարածքում կան 267 տեսակի թռչուններ, 34 տեսակի կաթնասուններ, 17 տեսակի սողուններ, 9 տեսակի ձկներ և 3 տեսակի երկկենցաղներ: Արտանիշի թերակղզին «Սևան» ազգային պարկի ցամաքային տարածքի ամենախոշոր մասն է կազմում՝ 2500 հա, և ունի հարուստ բուսական աշխարհ: Սևանի ավազանում հաշվառված 1600 բարձրակարգ բուսատեսակներից (որոնցից 22-ը էնդեմիկներ) 1000-ը աճում են այս տարածքում: Դրանցից 94-ը ծառեր և թփեր են:

«Խոսրով» պետական արգելոց: Ստեղծվել է 1958թ-ին, տեղակայված է Գեղամա լեռնավահանի հարավային դիրքադրության և Ուրծի ու Երանոս լեռնաշղթաների հյուսիս-արևմտյան լանջերին, Ազատ և Խոսրով գետերի ավազաններում՝ 1400-2250 մ բարձրությունների սահմաններում, զբաղեցնում է 29196 հեկտար մակերես: Արգելոցի ֆլորան, ըստ 1999թ. հաշվառման տվյալների, պարունակում է 1686 բուսատեսակ, որոնց 8.7%-ը կան 146-ը հազվագյուտ են: Առկա են վայրի կենդանիների 213 տեսակ: Հազվագյուտ տեսակների հաշվառում չի կատարվել: Արգելոցում բնակվում է 142 տեսակ թռչուն, որոնցից 66-ը կան 46.5%-ը գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»: Արգելոցում առկա են նաև 5 ձկնատեսակներ:

«Դիլիջան» պետական արգելոց: Ստեղծվել է 1958թ-ին, գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում, Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ձբաղեցնում է 27995 հեկտար մակերես, գտնվում է ծովի մակարդակից 1000-2300 մ բարձրությունների սահմաններում: Բուսական աշխարհը բաղկացած է 812 տեսակներից: Հազվագյուտ տեսակների հաշվառում չի անցկացվել: Հաշվառված է վայրի կենդանիների 112 տեսակ, որից 3-ը (2.7%-ը) հազվագյուտ 107 թռչուն, որից հազվադեպ են 49-ը (45.8%-ը) և 5 ձկնատեսակ:

«Շիկահող» պետական արգելոց: Ստեղծվել է 1958թ-ին, գտնվում է հանրապետության հարավային մասում՝ Ծավ և Շիկահող գետերի ավազաններում՝ 700-2400 մ բարձրությունների

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

սահմաններում, զբաղեցնում է 10 հազ. հեկտար մակերես: Արգելոցում բնակվող կենդանիների և բուսատեսակների հաշվառում 1999թ. չի իրականացվել:

«Էրեբունի» պետական արգելոց: Ստեղծվել է 1981թ-ին, գտնվում է Սերձարաքայան ծալքավոր լեռնաշղթաների քայքայված լանջերին, Կոտայքի և Արարատի մարզերի սահմաններում, ք.Երևանի շրջակայքում: Ջրաղեցնում է 89 հեկտար մակերես: «Էրեբունի» պետարգելոցում հաշվառված են 290 բուսատեսակ, որից 48-ը (16.5%-ը)՝ հազվագյուտ են: Վայրի կենդանիների տեսակների հաշվառում չի կատարվել:

«Աև լիճ» պետական արգելոց: Ստեղծվել է 1987թ-ին, գտնվում է Հայաստանի հարավում, Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասարի արևելյան լեռնաստորոտի կեղծ խառնարանային մասում, Հայաստանի և Ադրբեջանի սահմանային հատվածում՝ 2658մ բարձրության վրա և զբաղեցնում է 240 հեկտար մակերես: Պետարգելոցում հաշվառված են 160 բուսատեսակ, որից հազվագյուտ են 7-ը կամ 4.4%-ը: Վայրի կենդանիների տեսակների հաշվառում չի կատարվել:

Արգելավայրեր: Արգելավայրերը կազմավորվել են դեռևս 1950-70-ական թվականներին և նպատակ են հետապնդում ապահովելու էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների և նրանց տարրերի պահպանությունն ու վերարտադրությունը: Արգելավայրերի ընդհանուր մակերեսը կազմել է 89.9 հազ. հա: Ապօրինի ծառահատումներն ու հողազավթումները, մշտական որսագողությունը լուրջ վնաս են պատճառում արգելավայրերին և առավելապես դրանցում բնակվող կենդանական աշխարհին:

Հատուկ պահպանվող տարածքներում աշխատողների թվաքանակը տարեվերջին կազմել է 571 մարդ, որոնց 3.4%-ը գիտական աշխատողներն են, 39.4%-ը՝ անտառային պահակախումբը, իսկ 57.2%-ը՝ այլ բնույթի աշխատողներ:

Հատուկ պահպանվող տարածքների ֆինանսական մուտքերը կազմել են 97.6 մլն. դրամ, որի 96.8%-ը կամ 94.5 մլն. դրամը պետական բյուջեից, 3.2%-ը կամ 3.1 մլն. դրամը՝ այլ աղբյուրներից:

Հատուկ պահպանվող տարածքների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 133.5 մլն. դրամ: Նյութական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 15.0%-ը (20.0 մլն. դրամ), ոչ նյութական ծախսերը՝ 3.5%-ը (4.7 մլն. դրամ), գործուղման ծախսերը՝ 0.9%-ը (1.2 մլն. դրամ), 50.3%-ը (67.2 մլն. դրամը)՝ աշխատավարձի ֆոնդն է, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի գծով ծախսը կազմել է 20.3 մլն. դրամ կամ 15.2%-ը, այլ ծախսերը կազմել են՝ 20.1 մլն. դրամ կամ 15.1%: